ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1960 Общественные науки

Վ. Մ. Դարբինյան

# ԱՆԳԼԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսության ցատագովական բնույթը ակներև կերպով դրսևորվում է պրոլետարիատի դրության մեկնաբանման հարցերում։ Հենց ամենից ավելի այստեղ է, որ մեղանչելով անառարկելի փաստերի առաջ, անտեսելով տարբեր դասակարգերի տնտեսական դրության խոր տարբերությունները և հերքելով կապիտալիստական հասարակարգի այլանդակ հակասությունները, ժամանակակից բուրժուական տնտեսագետների ողջ շքախումբը միաբերան ու լիաթոք երգում է կապիտալիզմի «հարմոնիկ զեղեցկությունների» մասին։ Այս բնույթն է, որ մի հայտարարի է բերում տարբեր երկրների բուրժուական տնտեսագետներին ու վերջին պլանի վրա մղում տարբեր երկրների տնտեսական զարգացման առանձնահատկություններով պայմանավորված «ազգային» երանգները իդեոլոգիայի բնագավառում։ Այսպիսով, պրոլետարիատի դրության մասին Անգլիայի ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսության հիմնական թեզերն ու հարցադրումները հատուկ են նաև մյուս իմպերիալիստական երկրներին։

Լինելով արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանի ամենաառաջավոր երկիրը, Անգլիան պարարտ հող ստեղծեց բուրժուական կլասիկ քաղաքատնտեսության զարգացման համար։ Պատմական այդ ժամանակաշրջանը իր առաջավոր, սակայն անհետևողական բնույթը դրոշմեց տնտեսագիտության վրա։ Իմպերիալիզմի, հատկապես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանում բուրժուական տնտեսագիտությունը ձեռք բերեց զուտհիկ, ցատագովական բնույթ։ Եվ այսուր, այն հանգրվանը, որտեղ հանդիպում են ժամանակակից կապիտալիզմի օրոք բանվոր դասակարգի գրության վերաբերյալ բուրժուական զանազան թեորիաները՝ «ժողովրդական կապիտալիզմի» առասպելն է։ «Ժողովրդական կապիտալիզմի» հիմնական բովանդակությունը հանգում է նրան, թե բուրժուազիայի և պրոլետարիատի միջև դասակարգային տարբերություններն ու հակասություններն արդեն վերացել, կամ վերանում են, որ կապիտալիզմը դադարել է շահագործողական հասարակարգ լինելուց, որ «նոր», «արդի» կապիտալիզմը ապահովում է բոլոր քաղաքացիների բարեկեցության արագ բարձրացում, հասարակության բարգավաճում։ Այս տեսությունը, որի ակունքները գտնվում են դեռևս բուրժուական զուտհիկ քաղաքատնտեսության առաջին ներկայացուցիչներից՝ Ժան Բատիստ Սեյի և կապիտալիզմի ժամանակ դասակարգային համերաշխության այլ թմրկահարների մոտ, առաջին անգամ որպես սիստեմի բերված ցատագովական հոսանք շարադրվեց ամերիկացի պրոֆեսոր Թոմաս Նիքսոն Կարվերի՝ 1926 թվականին «Ժամանակակից հեղաշրջումը ԱՄՆ-ում» վերնագրով հրատարակված աշխատության մեջ։

ժամանակակից Անգլիայում «ժողովրդական կապիտալիզմի» ամենահայտնի մունետիկը Ջոն Ստրեչին է։ Նրա վերջին գործը, որը Անգլիայում հրատարակման համար նախատեսված «Դեմոկրատական սոցիալիզմի սկզբունքները» ցիկլի առաջին աշխատությունն է, լույս տեսավ 1956 թվականին՝ «Ժամանակակից կապիտալիզմը» վերնագրով։ Թեև Ստրեչու մտքերը նորություն չէին, սակայն այդ գիրքը գրկաբաց ընդունելություն գտավ բուրժուազիայի կողմից, որովհետև նա գտել էր նոր ... տերմին։ Դա՝ ներկայումս անընդհատ հոլովվող «կառավարման հեղաշրջումն» է, ըստ որի տեղի է ունենում «արդյունաբերական կապիտալի սեփականության բաժանումը նրա վերահսկողությունից։ Այդ աճող բաժանումը հանդես է գալիս մի կողմից՝ բաժնետերերի միջև ընկերության կապիտալի փոքր մասերի լայն տարածման, մյուս կողմից՝ կառավարիչների և դիրեկտորների նշանակման ձևով»[1]։

«Կառավարման բաժանումը սեփականությունից», որն իբրև կապիտալիզմի «դեմոկրատացման» ապացույց մեծ հիացմունքով է ներկայացնում Ստրեչին, ըստ էության վկայում է իմպերիալիզմի պարազիտային բնույթի ուժեղացումը։ Ովքե՞ր են այդ կառավարիչները, որոնք իրենց ձեռքը վերցնելով ձեռնարկությունների ղեկավարման գործը, դրանով իսկ ստեղծում են ինչ-որ «ժողովրդական ընկերություններ»։ Նրանք կապիտալիստ ձեռնարկատերերի գործակալներն են, նրանք ստրուկների վերակացուներն են ժամանակակից կապիտալիզմի պայմաններում։

Ստրեչին ժամանակակից բուրժուական հասարակարգն անվանում է «ստեյտիզմ» («պետականություն»), որտեղ կապիտալիստները, իբր դադարելով տիրապետելուց, ենթարկվում են պետությանը, այնպես, ինչպես մյուս բոլոր դասակարգերը և ծառայում են հօգուտ ամբողջ հասարակության։ Այդ ապացուցելու համար նա առաջ է քաշում «իշխանության դիֆուզիայի» միտքը։ Ըստ այդ տեսակետի՝ «քաղաքական դեմոկրատիան» ինքնըստինքյան փոխում է պետության և ամբողջ հասարակության բնույթը։ Սակայն բախվելով Անգլիայում պահպանված արքայական գահին, դիսկրիմինացիոն օրենսդրությանը, դատական ու կրթական ռեակցիոն մեքենային, գոյություն ունեցող հարկային հակաժողովրդական սիստեմին, նա այդ բոլորն անվանում է դեմոկրատիայի «տրադիցիոն ձևեր», որոնց թվում և՝ բրիտանական ռազմական ուժերը։

Դեմոկրատիայի այն «տրադիցիոն ձևերը», որոնց մասին Ստրեչին խոսում է որպես «նոր կապիտալիզմի» հատկանիշների, իրականում հանդես են եկել դեռևս այն դարաշրջանում, երբ ժամանակակից կապիտալիզմի մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Իր զարգացման ամբողջ ընթացքում բուրժուական պետությունը հանդիսացել է և հանդիսանում է շահագործող դասակարգերի տիրապետության գործիք, որի բոլոր միջոցառումներն արտահայտում են տիրապետող դասակարգերի շահերը, նրա քաղաքականությունը։ Ստրեչու «ստրեյտիզմը» դեմոկրատիայի ժամանակակից «տրադիցիոն ձևերի» հետ միասին փաստորեն հանդիսանում է պետական մոնոպոլիստական կապիտալիզմը։

Հենց այն շրջանում, երբ Ստրեչին գրում էր իր վերոհիշյալ աշխատությունը, անգլիական «Իմպերիալ բեմիկալ ինդեստրիզ» տրեստի (որը Անգլիայի բուրժուական գրողների կողմից հաճախ մատնացույց է արվում որպես

[1] John Strachey. Contemporary capitalism, London, 1956, p. 36.

«ժողովրդական կապիտալիզմի» հայելի) շահույթների տարեկան գումարը կազմեց ավելի քան 50 միլիոն ֆունտ ստեռլինգ, իսկ ակտիվները՝ 300 միլիոն։ Բանվոր-ծառայողներին տրվեցին ընդամենը 900 ֆունտ ստեռլինգ գումարով ակցիաներ։ Ընկերության 112 հազար աշխատավորներից ակցիաներ ունեին 75 հազար բանվորներ և ծառայողներ, այսինքն՝ յուրաքանչյուրին տարեկան հասավ ընդհամենը 12 ֆունտ ստեռլինգ արժողությամբ ակցիա[2]։ Ըստ որում այդ ակցիաները վաճառման ենթակա չէին։ Բացի դրանից, նրանք ոչ միայն չէին ապահովում ձայնի, այլև նույնիսկ ընկերության ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք։

«Կառավարման հեղաշրջումը» Ստրեչու կապիտալիզմի մի կողմն է միայն։ Միևնույն աշխատության 40-րդ էջում նա գրում է. սեփականության բաժանումը կառավարումից, «...բարեկեցության պետության հանգես գալու հետ միասին, ստեղծում են կապիտալիզմի մի նոր տեսակ»։ Այժմ հասկանալի է դառնում այն սիրալիր ընդունելությունը, որ վայելում է Ջոն Ստրեչին ինչպես Անգլիայում, այնպես և նրա սահմաններից դուրս, ինչպես բուրժուազիայի, այնպես և նրա պետության կողմից։

Այսպիսով, կապիտալիզմի «վերափոխումը» կապվում է պետության «բարերար» դերի հետ։ Սակայն այդ դեռևս «չարյաց փոքրագույնն» է։ Անգլիացի Դանիել Բելը համաձայն չէ Ջորջ Բեռնարդ Շոուի այն կարծիքի հետ, թե «տրեյդ-յունիոնիզմը՝ պրոլետարիատի կապիտալիզմն է»։ Արդյո՞ք այս սահմանումը Բելին դուր չի գալիս այն պատճառով, որ գերագնահատում է պրոլետարիատի դերը բուրժուական հասարակարգում։ Ո՛չ, ընդհակառակը։ Նա գրում է. «Այդ (Բեռնարդ Շոուի սահմանումը — Վ. Դ.) ճիշտ է միայն կիսով չափ։ Այն նպատակ ունի բորբոքել նրանց, ովքեր հավատում են մյուս կեսին։ Շոուի խոսքերից անցել է 25 տարի։ ... Այսօր ստեղծվել է որոշ չափով բյուրոկրատացած պրոլետարիատի բարեկեցության պետություն»[3]։ Եվ Բելը իր գործը վերնագրել է՝ «Պրոլետարիատի կապիտալիզմը»...։

Չի կարելի մտածել, թե բերված մտքերը «տպագրական սխալ են», կամ գուցե Բելը եզակի է իր տեսակետի մեջ։ Այդպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել. այսպես.— «Մեր փափկանկատ քաղաքական բառարաններում «մոնոպոլիա» բառը բացատրվում է որպես այս կամ այն նյութի մատակարարումների դժվարություն՝ առանձին ձեռնարկությունների կամ պետության կողմից վերահսկելու հետևանքով։ Սակայն այդ գործողությունները ճիշտ են նաև աշխատանքի նկատմամբ...։ Բանվորների գործադուլները տրեյդ-յունիոնների մոնոպոլիայի հետևանք են»[4]։ Այլ կերպ ասած՝ բանվորները հանդիսանում են հատուկ տեսակի ապրանքի՝ «աշխատանքի» մոնոպոլիստներ և ուզում են թալանել հասարակությունը։ Եզրակացությունն այն է, որ անհրաժեշտ է արգելել «աշխատանքային մոնոպոլիա» ապահովող բանվորական պրոֆմիությունները ու այլ կազմակերպությունները։

Ստրեչիները և բելերը խոսում են կապիտալիզմի «ժողովրդականացման» մասին այն ժամանակ, երբ «Մեծ Բրիտանիայի ազգաբնակչության մեկ տոկոսը տիրապետում է երկրի ամբողջ տնտեսական հարստության կեսին։ Դրան հակառակ, չափահասների $^{9}/_{10}$ մահանում է առանց որևէ սե-

[2] World News, 25 June, 1955, p. 503.

[3] Encounter, February, 1958, p. 24.

[4] Manchester Guardian Weekly, 26 May, 1955, p. 8.

տականություն թողնելու»։ Նույնիսկ պաշտոնական աղբյուրները խոստովանում են, որ «շահույթները շարունակում են աճել, իսկ տնտեսական անհավասարությունները՝ խորանալ»[6]։

Արդի անգլիական բուրժուական ջատագովական քաղաքատնտեսության ներկայացուցիչ Ջոն Ստրեչին որպես հեղինակ հայտնի էր դեռևս 20-ական թվականներին, երբ լույս ընծայեց «Արդարացի ռևոլյուցիա» աշխատությունը։ Հետագայում՝ 30-ական թվականներին մասնակցելով ֆաշիզմի դեմ մղվող պայքարին, հայտարարում էր իր համաձայնությունը մարքսիզմի հետ, փաստորեն կանգնած լինելով ռևիզիոնիստական ուղու վրա։ Ապա Ստրեչին աստիճանաբար գլորվեց ոչ միայն դեպի բացահայտ ռևիզիոնիզմ (1940-ական թվականներ), այլև դարձավ «կոմունիզմի սպառնալիքի» դեմ իմպերիալիզմի կողմից մղվող «սառը պատերազմի» թունդ պաշտպան (1952 թվական)։ 1954—1955 թվականներից նա ճանաչվեց որպես Ասիայի և Աֆրիկայի գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների արյունահեղ ճնշման ջերմ կողմնակից, ապա հանդես եկավ իր «ժամանակակից կապիտալիզմով», իսկ 1958 թվականի մարտ ամսին Անգլիայի համայնքների պալատում Ջոն Ստրեչին արդեն ձգտում էր ապացուցել «տակտիկական» միջուկային զենքի օգտագործման անհրաժեշտությունը, մի զենք, որն ավելի ավերիչ է, քան Հիրոսիմայի և Նագասակիի վրա օգտագործված ռումբերն էին։

Անգլիացի տնտեսագետ Ջոն Ստրեչու այս էվոլյուցիան ռևիզիոնիզմի զարգացման ուղու բնորոշ օրինակ է տալիս։ Յուրաքանչյուր նահանջ մարքսիզմի ստեղծագործական գիտության հիմնական սկզբունքներից՝ մի քայլ է դեպի բացահայտ բուրժուական ջատագովականություն, մի քայլ է դեպի իմպերիալիստական ռեակցիոն գաղափարախոսության ճահիճ։

Ժամանակակից կապիտալիզմի նորանոր որակումները, ինչքան էլ որ գեղեցիկ հնչելիս լինեն, «վերափոխված» կապիտալիզմի մասին շաղակրատանքները, ինչքան էլ որ օպտիմիստական լինեն նրանք, այնուամենայնիվ չեն կարող թաքցնել կապիտալիզմի բուն էությունը, չեն կարող հերքել ապրատացման փաստերը, որոնք ամբողջովին հաստատում են Մարքսի հայտնագործած կապիտալիստական կուտակման ընդհանրական օրենքը։ Բավական է նշել, որ Անգլիայում բանվորների ռեալ աշխատավարձի հետպատերազմյան մակարդակը չի հասնում նախապատերազմյանին. այսպես օրինակ, 1955 թվականին ռեալ աշխատավարձի մակարդակը 16 տոկոսով ցածր էր նախապատերազմյանից, իսկ առանձին բնագավառներում այդ տարբերությունը հասնում էր մինչև 36 տոկոսի[7], այն դեպքում, երբ հետպատերազմյան տարիներին անգլիական բանվորի ռեալ աշխատավարձը ամենաբարձր աստիճանին էր հասել հենց 1955 թվականին։ Անգլիայում «1946—1956 թվականների ընթացքում ռեալ աշխատավարձի եռամյա մնալը նշանակում է, որ ամեն մի բանվոր 9 տարվա ընթացքում ուղղակի կորցրել է իր տարեկան աշխատավարձի 1/3»[8]։ Իսկ 1956 թվականից մինչև 1958 թվականի հուլիս ամիսը, ըստ պաշտոնական տվյալների, լայն սպառման առարկաների մանրածախ գները բարձրացել են 9 տոկո-

[6] Challenge, June 1958, p. 4.
[7] International Political Science Abstracts, 1958, № 1, p. 92.
[8] Economica, August, 1954, vol. XXI, p. 211.
[9] World News, 2 March 1957, p. 130.

սով[9], այն ժամանակ, երբ, դարձյալ պաշտոնական տվյալների համաձայն, շարաթական աշխատավարձերի մակարդակը ետ էր մնում[10]։

Այս փաստերը չեն խանգարում բուրժուական տնտեսագետներին հայտարարելու, որ ստեղծված է «պրոլետարիատի կապիտալիզմ», ֆարիանական Կոուլին չեն խանգարում 1957 թվականին լույս տեսած «Կապիտալիզմը ժամանակակից աշխարհում» գրքում գրելու, որ բանվոր դասակարգի աղքատացման մասին մարքսիստական ուսմունքը իրականությանը չի համապատասխանում։ Անգլիայում «նոր կապիտալիզմի» գաղափարները պրոպագանդելու նպատակով նույնիսկ ստեղծված է մի Տնտեսական լիգա, որի կազմում կան ավելի քան 4000 անդամներ։ Այդ լիգայի կենտրոնական խորհրդի 40 անդամներից 33-ը խոշոր մոնոպոլիստական միությունների դիրեկտորներ են[11]։ Լիգայի նպատակն է, գովերգել կապիտալիզմի բարիքները, ներշնչել, որ Անգլիայի ժողովուրդը ամբողջությամբ վերցրած կապիտալիստ ժողովուրդ է։

Բուրժուական հասարակարգում բանվոր դասակարգի տնտեսական անապահով դրության, պրոլետարիատի աղքատացման լուրջ գործոն է գործազրկությունը՝ կապիտալիզմի այդ անխուսափելի ուղեկիցը։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ծավալման ու խորացման հետ գործազրկության հարցի նկատմամբ բուրժուական մոտեցումը ընդունում է տարբեր ձևեր և ստեղծվող տարբեր թեորիաները ամբողջությամբ համապատասխանում են ֆինանսական օլիգարխիայի պահանջներին.— քողարկելով մշտական, մասսայական գործազրկության և իմպերիալիզմին հատուկ հակասությունների օրգանական կապը, ստեղծել հավատ բանվորների աշխատավարձի իջեցման ուղիով գործազրկության վերացման հնարավորության նկատմամբ։

Աշխատավարձի և գործազրկության հարցերի աղավաղված միախառնումը, որ կատարելության հասավ անգլիական մոնոպոլիստական կապիտալի իդեոլոգ Ջոն Մեյնարդ Կեյնսի մոտ, իր ակունքներն ունի գոեհիկ տնտեսագիտության «աշխատավարձի ֆոնդի» թեորիայի մեջ։ Ըստ այդ թեորիայի, անկախ աշխատավորների քանակից որևէ երկրում աշխատավարձի գումարը մի անփոփոխ մեծություն է. հետևաբար, աշխատող բանվորների թվի ավելացումը պետք է համապատասխանաբար նվազեցնի մեկ բանվորի աշխատավարձի մեծությունը, կամ մեկ բանվորի աշխատավարձի մեծացումը պետք է համապատասխանաբար նվազեցնի զբաղված բանվորների թիվը։ Միակ տարբերությունը, որը բաժանում է մարշալյան «աշխատավարձի ֆոնդը» կեյնսյան «լրիվ զբաղվածությունից» այն է, որ անգլո-ամերիկյան դպրոցի պարագլուխ, էկլեկտիկ Ա. Մարշալը հրամայում է ուղղակիորեն կրճատել «դրամական» (անվանական) աշխատավարձը, իսկ Կեյնսը հանձնարարում է շեշտը դնել ռեալ աշխատավարձի իջեցման վրա։

Մինչև «1930-ական թվականները Կեյնսը մեկուսացած և չսիրված դեմք էր»[12]։ Միայն 1936 թվականին հրատարակված նրա «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր թեորիա» աշխատությունն էր, որ Կեյնսին մեծ համբավի արժանացրեց խոշոր բուրժուազիայի ակումբներում։ Իր այդ գրքով Կեյնսը

[9] Board of Trade Journal, August 1958, № 3212, p. 380.
[10] Monthly Bulletin of Statistics, July 1958, p. 124.
[11] Labour Research, October 1955, p. 149.
[12] Encounter, April, 1958, p. 16.

ձեռնամուխ է եղել գործազրկության պատճառների սահմանմանը։ Զբաղվածության մակարդակը կախված է պահանջարկի մակարդակից, իսկ պահանջարկը լինում է արտադրական ու սպառողական։ Հենց այստեղ Կեյնսը կատարում է կրիտիկական թռիչք տնտեսական հարաբերությունների աշխարհից դեպի հոգեկան աշխարհ, որտեղ և հայտնաբերում է բոլոր չարյաց, այդ թվում՝ գործազրկության պատճառը.— արտադրողական պահանջարկը նվազում է, որովհետև չքացել են ձեռնարկատերերի հույսերը հետագա կապիտալ ներդրումների նկատմամբ. հետևաբար, անհրաժեշտ է քաջալերել կապիտալիստներին, ապահովել նրանց բարձր շահույթներ։ Բացի արտադրական պահանջներից նվազում է նաև սպառողական պահանջարկը, որովհետև կեյնսյան «հիմնական հոգեբանական օրենքի» համաձայն, անձնական սպառման աճը ետ է մնում անձնական եկամտի աճից։ Այսպիսով, Կեյնսը ամբողջովին խեղաթյուրում է կապիտալիստական հասարակարգում արտադրության և սպառման դիալեկտիկան։

Կեյնսյան «լրիվ զբաղվածության» թեորիայի հիմնական էությունը ավելի ցայտուն է դրսևորվում նրա հետևորդների՝ Ռոբինսոնի, իսկ այնուհետև՝ Բևերիջի աշխատություններում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, 1942 թվականին, Բևերիջը հանդես եկավ «Սոցիալական ապահովությունը և միացյալ ծառայությունները» գրքով, որտեղ նա մի նոր սուրբ Գևորգի դեր էր վերապահում իրեն։ Նա դոնկիխոտյան պայքարի էր դուրս եկել սոցիալական չարիքների դեմ։

Գործազրկության հարցում կեյնսականության անմտությունների նմուշներ են տվել անգլիացի մի շարք այլ հեղինակներ ևս։ Դրանցից բուրժուազիայի կողմից ավելի գրկաբաց ընդունելություն են գտել Ռոբերտսոնի «Դրամական թեորիայի ուրվագծեր» (Լոնդոն, 1940), Լեռների՝ «Վերահսկողության էկոնոմիկան» (Լոնդոն, 1944), Ա. Հանսենի՝ «Կեյնսականության առաջնորդ» (Լոնդոն, 1953) աշխատությունները։ Այս շարքում ամենաթարմ գործերից է Մ. Հանսենի՝ «Այսօրվա քաղաքացին» աշխատությունը, որը լույս է տեսել 1957 թվականին։ Ահա գործազրկության առաջացման նրա հիմնական բացատրությունը. «Բումի տարիներին բիզնեսմենները օպտիմիստ են դառնում և իրենց գործի ընդլայնման շանսեր տեսնելով, նոր սարքավորումների պատվերներ են տալիս... Սակայն անկման ժամանակաշրջանում բիզնեսմենները պեսիմիստ են դառնում շահույթների ստացման հարցում և այլևս նոր սարքավորման պատվերներ չեն տալիս։ Հետևաբար պահանջը նվազում է, մարդիկ ձեռնարկություններում գործ չունեն և գործազրկությունը ավելանում է»[13]։

Եթե Կեյնսը միախառնում է մարշալյան «աշխատավարձի ֆոնդի» թեորիան մալթուսականության հետ, ապա ժամանակակից բուրժուական տնտեսագետները այդ սոֆիզմը հասցնում են կատարելության՝ Կեյնսի և Մալթուսի ուսմունքների խառնուրդի ձևով։

Նեոմալթուսականները վերակենդանացնում և «ծաղկեցնում» են Մալթուսի ուսմունքը։ Կապիտալիստական կարգերն արդարացնելու, կապիտալիստական աշխարհում թագավորող աշխատավոր մասսաների աղքատության պատասխանատվությունը առասպելական «բնական օրենքների» վրա դնելու

[13] Hansen M., A Citizen of Today, Oxford, 1957, p. 126.

համար իմպերիալիստական բուրժուազիայի գաղափարախոսները, ինչպես Վոգարը, Նոուլզը, Կիֆֆերը, Պենդելլը, Պիրին և այլն, առանձնահատուկ եռանդով են վերակենդանացնում ու տարածում Մալթուսի մարդատյաց տեսակետները։ Թե ինչպիսի չափեր է ընդունել մալթուսական քարոզը կապիտալիստական երկրներում, կարելի է պատկերացնել նրանով, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մալթուսի հետևորդների կողմից հրատարակվեց ավելի շատ գիրք, քան ամբողջ նախորդ մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում։ Ճիշտ է, ընտրվում են զանազան պիտակներ՝ որպես նորություն հրամցրնելու համար Մալթուսի տեսությունը, սակայն, ինչքան էլ որ այլազան լինեն անվանումները՝ «կենսատարածության», թե «դեմոգրաֆիական ցիկլի», էությունը և նպատակը մնում են անփոփոխ.— կապիտալիզմի ժամանակ աշխատավոր մասսաների աղքատացումը, գործազրկությունը, սոցիալական բոլոր դժբախտությունները բխեցնել ոչ թե հենց կապիտալիստական տնտեսությունից, այլ մարդկային հոգու, սեռական մոմենտների և տրադիցիաների ուժից։ Նեոմալթուսականության բոլոր ներկայացուցիչներն էլ անխտիր, ինչպես էլ որ չփորձեն քողարկել իրենց կապերը Մալթուսի հետ, վերջին հաշվով եկնում են մալթուսականության կվինտ էսենցիայից։ «Նեոմալթուսականները ոչ մի նոր գյուտ չեն արել։ Նրանց թեորիաները հենվում են նույն անկայուն հիմքի վրա, որի վրա հենվում էր Մալթուսը։ Իրենց մարգարեություններին ռեալության տեսք տալու համար, նրանք իրենց նախագուշակությունները հաստատում են վերջին 200 տարվա ընթացքում բնակչության ամենամյա աճի վկայակոչությամբ և հաշվում են, որ 300 տարուց հետո, աշխարհի բնակչության քանակը կհասնի 21 միլիարդ մարդու։ Այդ հաշվումները նույնքան քիչ արժեք ունեն,— գրում է բրազիլիական գիտական Ժոզուե դե Կաստրոն,— ինչպես և Մալթուսի հաշվումները, որոնք հերքվել են պատմության կողմից»[14]։

Աննդի բրազիլիական ինստիտուտի դիրեկտոր և ՄԱԿ-ին կից Պարենի ու գյուղատնտեսության հարցերի Կազմակերպության գործադիր կոմիտեի նախագահ Ժոզուե դե Կաստրոյի աշխատություններում կատարված հետազոտությունները «քննադատության» են ենթարկել անգլիացի մալթուսականներ Կլարկը և Պիրին։ Նրանք գրում են. «Կասկածելի է այս նորմայի (դե Կաստրոյի այն հաշվումը, որ շուրջ 2 ակր, այսինքն՝ 0,810 հեկտար տարածություն է հարկավոր յուրաքանչյուր շնչի սնունդն ապահովելու համար,— Վ. Գ.) ձեռք բերումը նույնիսկ աշխարհի ներկա բնակչության պայմաններում»[15]։ Ի դեպ հիշեցնենք, որ սովետական նշանավոր գիտնական, ակադեմիկոս Լ. Ի. Պրասոլովի տվյալների համաձայն, գյուղատնտեսական օգտագործման համար բոլորովին ոչ պիտանի Արկտիկայի և Անտարկտիկայի հողերից բացի, ամբողջ ցամաքի մակերևույթի ավելի քան $^2/_3$-ը, կամ, մոտավորապես 10.5 միլիարդ հեկտարը ամբողջությամբ պիտանի է գյուղատնտեսություն վարելու համար։ Մինչդեռ այժմ հողագործության համար օգտագործվում է ոչ ավելի քան մեկ միլիարդ հեկտար։ Այսպիսով, գյուղատնտեսական կուլտուրաների տարածությունների լայնացման հնարավորությունները մինչև օրս գործնականում անսպառ են։

---

[14] Ժ ո զ ու ե դ ե Կ ա ս տ ր ո, Սովի աշխարհագրությունը, էջ 58. Հայպետհրատ 1957 թ.

[15] P l a n n i n g. April. 1952, № 340, p. 235.

Սակայն Կլարկն ու Պիրին պնդում են, որ «անհրաժեշտ սննդի ապահովման համար պահանջվող միջին տարածությունը խիստ անորոշ է, որովհետև այնքան փոփոխվում է բերքատվությունը...»։ Այսպիսով, ինչպես առհասարակ բոլոր մալթուսականների, այնպես և Կլարկի ու Պիրու մոտ պարզ դրսևորվում է մալթուսականության կապը հողի նվազող բերքատվության օրենքի հետ, թեև հայտնի է, որ այդ օրենքը «ամենևին կիրառելի չէ այն դեպքերի նկատմամբ, երբ տեխնիկան առաջադիմում է, երբ արտադրության եղանակները փոխակերպվում են...»[16]։

Նեոմալթուսականության բնորոշ նմուշ են ներկայացնում Անգլիայում հրատարակվող «Պլեննինգ» հանդեսից քաղված հետևյալ հատվածները. «Մահացության վերահսկումը տալիս է կյանքի խիստ մեծացրած տևողություն։ ...Մարդկության մեծամասնությունը պարզապես կանգնած է դերխճողված, աղմկոտ, աղքատ և ընչաքաղց լինելու վտանգի առաջ։ ...Բժշկական օգնությունը դառնում է նապաստակ, իսկ հողագործական բարելավումները՝ կրիա»[17] և այլն։ Սակայն տեղն ու տեղը զարմանքով ավելացվում է, որ «ներկայումս աշխարհի սննդի արտադրությունը աճում է տարեկան միջին հաշվով 2, իսկ բնակչությունը՝ շուրջ 1,3 տոկոսով»։

Անգլիացի նեոմալթուսական Ֆրանգսոն Ռոբերտսը գրում է. «Արդի բժշկական մասնագիտությունը դեռևս իր էթիկան կառուցում է 2000 տարի սրանից առաջ ապրած մի տգետ մարդու[18] կասկածելի տեսակետի վրա՝ հավատալով, թե բժշկության պարտականությունն է կենդանի պահել ինչքան հնարավոր է շատ մարդկանց»[19]։

Մեկնաբանություններն ավելորդ են։

Մարքսիզմ-լենինիզմը վճռականորեն ժխտում է մալթուսականությունը։ «... Մենք անպայման թշնամիներ ենք նեոմալթուսականության, այդ հոսանքի՝ անհոգի և եսասեր քաղքենիական զույգի համար, որը վախեցած մրթմրթում է՝ մենք, տա աստված, մի կերպ դիմանանք, իսկ երեխաներ, ավելի լավ է չլինեն»[20]։

Բնորոշ է, որ բուրժուական տնտեսագիտությունը, գործազրկության առաջացման հակագիտական բացատրությունների և գերբնակչության վերացման ցնորային առաջարկների հետ միասին չի զլանում նաև գործազրկության գոյության և նույնիսկ նրա ավելացման անհրաժեշտության «բացատրությունը» տալ։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխուժացավ գործազրկության մեծացման «հիմնավորումը», որպես անգլիական էկոնոմիկայի դժվարություններից դուրս գալու միջոց։ Այդ տեսակետը ակտիվորեն պրոպագանդում են հատկապես Կեննինգհեմը, Հեյտսկելը, Հարոդը։ Բուրժուական մամուլը աջակցում և հավանություն է տալիս այդ տեսակետներին։ Այսպես, «էկոնո-

---

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 139։

[17] Planning. April, 1954, № 362. pp. 50, 62.

[18] Նկատի ունի հին հունական բժշկության խոշորագույն ներկայացուցիչ Հիպոկրատին (մ. թ. ա. 460–377), որն իր աշխատություններում հատուկ ուշադրություն առարկա էր դարձնում բժշկի կողմից հիվանդի նկատմամբ ցուցաբերվող հսկողության, բարեխղճության հարցերը։

[19] Frangson Roberts, The Price of Health, London, 1958.

[20] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 280–281։

միստը» գրում է. «97 տոկոս զբաղվածությունն այն առավելագույն աստիճանն է, որը կարող է թույլ տալ որևէ երկրի էկոնոմիկան, եթե խուսափելու է անկումից և ինֆլյացիայից»[21]։ Նույն թվականին «Բրիտանական ձեռնարկատերերի կոնֆեդերացիան» հրատարակեց «Բրիտանական արդյունաբերության ապագան» փաստաթուղթը, որը պահանջում է ստեղծել գործազրկության մի «դաշտ», որպեսզի հնարավոր լինի ճնշում բանեցնել աշխատավարձի մակարդակի վրա։ Կոնֆեդերացիան գործազրկության համար նախատեսնում է 3 տոկոս, այսինքն՝ 750 հազար մարդ։ 1957 թվականի օգոստոսին նշանակված «Գների, արտադրության և եկամուտների» կառավարական հանձնաժողովը, որը ճանաչված է որպես «Կոհենի խորհուրդ», կազմեց հատուկ զեկուցագիր, որտեղ նշում է,— «... չպետք է զարմանալ, եթե հետագայում անհրաժեշտ համարվի ավելի ևս մեծացնել գործազրկությունը»[22]։

Համաձայն բուրժուական տնտեսագիտության, անգլիական էկոնոմիկայի հետպատերազմյան դժվարություններից դուրս գալու համար, բացի գործազրկության ավելացումից, անհրաժեշտ է պետական իշխանության առավել էֆեկտիվ միջամտությունը մոնոպոլիաների շահույթների ավելացման գործում։ Շահույթներից պահվող հարկերը շատ բարձր են և այդ պատճառով հուսալքում են արդյունաբերողներին՝ արտադրության ընդլայնման ու արտահանման հարցերում։ Ինչո՞ւ պետք է ձեռնարկատերերը ընդլայնեն արտադրությունը, եթե հարկերի մեծացման պատճառով հույս չունեն ավելի շատ շահելու։ Հետևաբար անհրաժեշտ է կրճատել հարկերը. իսկ քանի որ պետությունը չի կարող յոլա գնալ ավելի քիչ հարկային եկամուտներով, ապա անհրաժեշտ է բարձրացնել ապրանքագները և «սառեցրած» պահել բանվորների աշխատավարձերը՝ «հանուն Մեծ Բրիտանիայի բարգավաճման»։ Ահա թե ինչու անգլիական «կառավարությունները հաջորդաբար ժողովրդին կոչ են անում ավելի խնայող լինել, ավելի լարված աշխատել, հրաժարվել աշխատավարձի բարձրացման և գների իջեցման պահանջներից»[23]։ Ըստ որում, անգլիական կառավարությունը ոչ միայն կոչ է անում, այլև «բացահայտորեն վարում է աշխատավարձերի բարձրացումը արգելակող կուրս այն ժամանակ, երբ մյուս կողմից, ոչ մի դրական քաղաքականություն չի մշակում ապրանքագների բարձրացումը դադարեցնելու նպատակով»[24]։

Եթե «Ժողովրդական կապիտալիզմի» տեսությունը հայտարարում է, որ «կապիտալի դեմոկրատացման» շնորհիվ բանվորները դարձել են կապիտալիստներ, հետևաբար վերացել են դասակարգային տարբերությունները, ապա լեյբորիստական իդեոլոգիան պնդում է, որ «տնտեսական հավասարության հասնելու համար պետք է բարելավել հարկային քաղաքականությունը»[25]։

Թեև «հարստությունների հավասարման» տեսությունը հատուկ է առհասարակ գռեհիկ տնտեսագիտությանը և գալիս է դեռևս անգլիական բուրժուական քաղաքատնտեսության դասական դպրոցին մոտիկ կանգնած Ջոն Ստյու-

[21] The Economist, 23 September, 1955.
[22] World News, 29 March, 1958, p. 196.
[23] Political and Economic Planning, May 1958, № 422, p. 99.
[24] Labour, January 1958, p. 7.
[25] World Socialist, February 1957, p. 11.

արտ Միլլից, այնուամենայնիվ այդ ուսմունքը ֆաբիանականությունը կտակեց լեյբորիստական պարտիային։

Ֆաբիանականների ընկերությունը ստեղծվել է անգլիական բուրժուական ինտելիգենցիայի կողմից։ Դա մի ծայրահեղ օպորտունիստական խումբ է, որը քարոզում է բանվոր դասակարգի ու բուրժուազիայի համագործակցության մասին, վճռականորեն ժխտելով դասակարգային պա քարը և աշխատավորների ռևոլյուցիոն ելույթները։ Ֆաբիականությունը ըստ էության ուղեկցել և ուղեկցում է լեյբորիստական պարտիային, որպես բուրժուական «սոցիալիզմի» իդեաների ֆաբրիկա։ Լեյբորիստական իդեոլոգիան, լինելով ֆաբիանականության հետագա զարգացումը, կազմավորվեց այլ էպոխայում՝ երկու սիստեմների պայքարի էպոխայում, մի հանգամանք, որը պայմանավորեց աջ լեյբորիզմի առավել ռեակցիոն էությունը։ Ֆաբիանականության գլխավոր իդեան կապիտալիզմի խաղաղ ներաճումն է սոցիալիզմի մեջ, «մունիցիպալ» սոցիալիզմը, որը հարկային քաղաքականությունը համարում է եկամուտների հավասարեցման միջոց։ Անգլիայում «պետությունը շնորհում է հարկային բարեյավումներ, նվազեցնելով շահույթներից և այլ անաշխատ եկամուտներից մասհանվող հարկերը, դրանով ամենամեծ օգնություն մատուցելով նրանց, ովքեր ամենաքիչն են օգնության կարիք զգում»[26]։

Լեյբորիստական պարտիայի գլխավոր քարտուղար Սորգան Ֆիլիպսը հայտարարում է, որ սահմանային օգտակարության ուսմունքը լեյբորիստական պարտիայի պաշտոնական թեորիան է։ Լեյբորիստ Ջեյը գտնում է, որ հասարակությունը կապիտալիստ ձեռնարկատերերին վարձատրում է ավելի քիչ, քան նրանք «աշխատում են»։ Կրոսմենը «հայտնագործել է», որ արևմտյան Եվրոպայում արդեն վերացված է շահագործումը և եթե հանդիպում ենք այդպիսի փաստերի, ապա դրանք պատահականություններ և բացառություններ են միայն։ Լեյբորիստական պարտիայի պարագլուխներից Մորիսոնը «ապացուցում է», որ ամբողջ Բրիտանական կայսրության մեջ շահագործումը վերացված է։

Այսպիսով, անգլիական բանվորը և՛ լսում է, որ նա կապիտալիստ է, և՝ հորդորվում է դիմանալ, խնայող լինել, հրաժարվել աշխատավարձերի բարձրացման ու գների իջեցման պահանջներից, և՛ մեղադրվում է բազմացման տեմպի հետևանքով գործազրկության պատճառ լինելու համար, և՛ զգուշացվում է, որ «Մեծ Բրիտանիայի բարգավաճման» շահերը պահանջում են մեծացնել գործազրկությունը, և՛ հուսադրվում է, որ «արդար հարկման» միջոցով պետք է իրականացվի եկամուտների հավասարեցում։

Այս բոլորից ակնհայտ երևում է, որ բուրժուական տնտեսագիտությունը, իր բոլոր տարբերակներով ճգնում է քողարկել սոցիալական չարիքները, բթացնել պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը և դրանով իսկ նրան հեռու պահել տնտեսական ու քաղաքական նպատակասլաց պայքարից։

[26] Socialist International information, May 1955, p. 307.